



2017 թվականի ապրիլի 30-ին, Վիրահայոց թեմի Նինոծմինդայի «Ռաֆայել Զավախ» կրթա-մշակութային և երիտասարդության կենտրոնում տեղի ունեցավ «Սովորիր ժողովրդիդ պատմությունը» խորագրով ինտելեկտուալ խաղի եզրափակիչ փուլը: Խաղին ընդգրկվել էին կենտրոնի հայ ժողովրդի պատմության (ուսուցիչ՝ Սամվել Փութուլյան), կրոնի (ուսուցիչ՝ Ռիմմա Սահակյան) և արվեստի պատմության (ուսուցիչ՝ Ժորա Սնիսյան) խմբակների 30-ից ավելի սաներ:

Ինտելեկտուալ խաղը, որը կենտրոնում մեկնարկել էր մի քանի ամիս առաջ, ընթացավ երկու փուլով: Մասնակից խմբակները, ստանալով կենտրոնի ուսուցիչների կողմից կազմած և ղեկավարության կողմից հաստատված 100 հարցերը, ըստ թեմատիկայի բաժանված խմբերում անցկացրեցին մրցույթներ: Այնուհետև առավել աչքի ընկած սաները, համախմբվելով տարբեր խմբերում, կազմեցին 6 թիմ և մասնակցեցին եզրափակիչ խաղին:

Թիմերը միմյանց հետ մրցասպարեզ դուրս եկան ցույց տալով իրենց գիտելիքները տարբեր հարցերի շուրջ շոշափվող թեմաներից: Խստապահանջ մրցատյանը, որի կազմում էին

Կենտրոնի տնօրեն Ժորա Սնիսյանը, Սաթենիկ Մկրտչյան-Սնիսյանը և Աթանաս սարկավագ Կիրակոսյանը, սահմանված ժամանակային տևողությամբ և նորմերով անցկացրեց շուրջ 2 ժամ տևած մրցույթը, բացահայտելով լավագույներին:

Հետաքրքիր և ուսանելի խաղում հաղթող ճանաչվեց «Փարվանա» թիմը՝ առաջնորդ Թագուհի Հովհաննիսյանի գլխավորությամբ, իսկ մրցույթի լավագույններ դարձան կենտրոնի սաներ Միլենա Բդոյանը, Նադյա Հովհաննիսյանը, Երանուհի Խաչատրյանը, Գոհար Բդոյանը, Լաուրա Մզիկյանը: Հաղթող «Փարվանա» թիմը արժանացավ ինտելեկտուալ խաղերի մասնակցի դիպլոմի, իսկ մյուսներին տրվեցին պատվոգրեր: Ինտելեկտուալ խաղն իրենց գեղեցիկ ելույթներով զարդարեցին «Ռաֆայել Զավախ» կենտրոնի ասմունքի ակումբի անդամները և երգչախումբը:



